




2004-2005 ԵՐԿԱՄԵԱՑ ՏՆՂԵԿԱԳԻՐ

ՆԵՐԿԱՑԱՑՈՒԱԾ 84^{րդ} ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ
ԴԵԿՏԵՄԲԵՐ 9, 2006 ՓԱՐԻԶ, ՖՐԱՆՍԱ

ՀԲԸՄ 100



ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողով 2004-2005



Նախագահ
Պերն Սեդրակեան
Փոխ Նախագահներ
Սարգիս Տեմիրեան Եւ Արշալիր Կէօնեան

Գանձապահ
Նազար Նազարեան
Ատենադպիր
Ժողէֆ Պասրալեան

Պատուոյ Անդամ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս

Կեդրոնական Վարչական Ժողովի Ատենապետ
Լուիզ Մանուկեան Սիմոն
Փոխ Ատենապետ
Նազար Նազարեան

Անդամներ

ԱՄՆ՝ Մ. Մայքըլ Անտուր, Գերօլ Պաղտասարեան-Ապանեան, Բիչըրտ Մանուկեան,
Պենոն Սեւան, Սէմ Սիմոնեան, Սիման Սիմանեան, Տիգրան Թեւրիզեան
Պելիգա՝ Էտուարտ Ժախեան (2004)
Ֆրանսա՝ Արիս Ադամեան (2004), Լեւոն Քէպապեան
Սուրիա՝ Գառնիկ Եագուպեան

Պատուակալ Անդամներ

Հայկաշէն Ուզունեան,* Պէրի Զորթեան

Ի յիշատակ

Պօղոս Նուպար՝ Հիմնադիր, Ալեք Մանուկեան՝ Ցկեանս Պատուակալ Նախագահ

*մահացած 2006

ՀԲԸՄ/AGBU 55 EAST 59TH STREET, NEW YORK, NY 10022-1112 PHONE 212-319-6383 FAX 212-319-6507 EMAIL AGBUNY@AGBU.ORG WEBSITE WWW.AGBU.ORG

Առջեւի կողմ - 1-ին կարգ (ձախէն աջ)։ Նիւ Երբի Ամառնային Վարժողական Ծրագրի ուսանող Գոյուպիա Համալսարանէն ներս- Ամառնային Ճամբար, Անսէլ, Ֆրանսա- Ամերիկայի Կարմիր Խաչի մեծ նուիրատուութեանց Աւագ Պաշտօնացի Պարպարա Օ'Ռայլի յուշատախտակ կը յանձնէ Կեդր- Վարչութեան անդամ Մայքըլ Անտուրին, իբր երախտագիտութեան նշան ՀԲԸՄի կատարած 100,000 տոլարի նուիրատուութեան՝ 2004 Կարմիր Խաչի "Գաթրինա" Հիմնադրամին՝ 2-րդ կարգ- Գալիֆորնիոյ Մանուկեան-Տեմիրեան Վարժարանի շրջանաւարտներ- Լոնտոնի Մասնաճիւղի Ատենապետ Յարութ Աղանեանն եւ Գանձապահ Պերոս Ապանեան (երկուք կեդրոն) Բարնշէն գիւղի յատակագիծը կը բնեն տեղացի Վարարացի պաշտօնեաներուն հետ- Վերջերս վերանորոգուած Ալեք Մանուկեան Կեդրոն, Մոնթրէալ- 3-րդ կարգ- Վագգէնեան Ճեմարան, Սեւան, Հայաստան- Նիւ Երբի Ամառնային Վարժողական Ծրագրի ուսանողները Ուաշինկթոն կ'այցելին- Սոփրաօ Իգալէ Պայրագարեան հանդիսատեսներուն առջեւ կը խոնարհի Հայաստանի Ֆիլիարմոնիկ Նուագախումբի համերգի աւարտին- 4-րդ կարգ- Ժայաւեն հատուտ արարողութիւն՝ Սեւանայ Լիւի Վագգէնեան Ճեմարանի նոր հան-րակացարանի բացումին- Երեւ Հայորդաց Կեդրոններէն մէկուն ուսանողները փայտի վրայ փորագրութիւններ կ'ընեն- 5-րդ կարգ- Սիւնի (Աստրախի) տղի ունեցած Միջոյրոցական Վիճարանական Մրցման յաղթանակ տանող Ալեքսանտր Նախակրթարանի աշակերտները- Հայորդաց Կեդրոններու ուսանողներ համակարգիչ գործածելու կը վարժուին- Երեւանի մէջ ՀԲԸՄի հովանաւորած "Անուշ" օփերայի ներկայացում- 6-րդ կարգ- Կեդր- Վարչութեան Անդամ Լեւոն Քէպապեանն եւ Ֆրանսայի Տրք- Յանձնաժողովի Անդամ Արա Ահարոնեան՝ Վարարացի վերարձակեցման Ծրագրին մաս կազմող գիւղի մը յատակագիծը կը բնարկեն տեղացի կապալաւորներէն մէկուն հետ- Միլպուրի Մասնաճիւղի կողմէ բնադրուած "Սաունգ Արմինիք" հանդէսէն հայկական ժողովրդական պար- Թշակաւորներ տամ նաշ կ'ուտեն Հայաստանի մէջ հաստատուած վեց կարօտեակներու նաշարաններէն մէկուն մէջ- 7-րդ կարգ- Թեհրանի երիտասարդներ Պարսկաստանի պատմական Քաշան Բաղսէր կ'այցելեն- Փարիզի Ամառնային Վարժողական Ծրագրի ուսանողներ Ֆրանսայի մայրաքաղաքին կ'ընտելան- Յաջորդ Սեւոնդ Խորհրդատուական Ծրագրի չափահաս անդամներն ու աշակերտները միասնաբար տեղական իրենց համայնի կրաֆիթի (տգեղուցիկ պատկերող արձանագրութիւններ) կը մարնեն։

Նտեւի կողմ - 1-ին կարգ (ձախէն աջ)։ Գորտուպա Հայրերու Յանձնախումբի առաջին ձեռնարկը- Հարապին Գալիֆորնիոյ Տրք- Յանձնաժողովի առաջին "Սոսայիթի Կալա"՝ ճաշկերպը- Անդրանիկ Պարպարեանի երկրորդ իր 35-ամեակի առթիւ- 2-րդ կարգ- Իւշնակախար Շահան Ածրոնի Գալիթի Մասնաճիւղի Ատենապետ Օննիկ Պլլրօտանեանի եւ Եգիպտոսի Տրք- Յանձնաժողովի Ատենապետ Պերն Թեմիրեանի հետ, ՀԲԸՄ Խաչարեան 100-ի յայտագրի շրջապայտեան ընթացքին- Սիւնիի Մասնաճիւղը կը հիւրընկալէ Վարդան Թաշնեանի արուեստի ցուցահանդէսը- Հայաստանի Ամերիկեան Համալսարանի յուշատախտակը- 3-րդ կարգ- Թեհրանի սկաւտներ տեղական կեդրոնին մէջ- Հայաստան գումարուած 83րդ Ընդհանուր Ժողովի մասնակիցներ- Ս- Էջմիածնի վանքի հանրակացարաններու շինարարութիւն- 4-րդ կարգ- Սաութֆիլտ, Միչիկըն, Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարանի շրջանաւարտից դասարան՝ Հարա- Գալիֆորնիոյ Տրջանակին տարեկան "Սոսայիթի Կալա"ի ճաշկերպի Յանձնախումբի անդամներ- Հայաստանի Իրինտ գիւղի դարոց- 5-րդ կարգ- Ալեք Մանուկեանի Յուշարձանը, Ալեք Մանուկեան Փողոց, Սոսիանակերտի կեդրոն- Տեսարան մը Նորի Հայորդաց Կեդրոնի խումբի Նիւ Երբի ներկայացումին- Նիւ Երբի Ամառնային Վարժողական Ծրագրի մասնակիցները- 6-րդ կարգ- Հայորդաց Կեդրոններէն մէկուն մանուկներ- ՀԲԸՄիւրօքեան Նախագահ Պերն Սեդրակեան Գերալդային Ախտանաւազման Կեդրոնի զոյց տնօրէններու՝ ԲԺ- Համարարձանեանի եւ ԲԺ- Սիսակեանի, ինչպէս նաեւ հոն կրթութիւն ստացող երկու հնդիկ թիշկներու հետ- Լուս Աննիտի երիտասարդ Արիստակարծներու խումբի անդամներ- 7-րդ կարգ- Վարպետ դուռնի նուագող Ճիւս Գասպարեան եւ պարուհի Սօֆի Դեւոյեան Լիբանանի Տրք- Յանձնաժողովի կողմէ հովանաւորած ներկայացման աւարտին- 83րդ Ընդհանուր Ժողովի նիստ, Հայաստան- Սան Փաուլոյի Մասնաճիւղի Փոխ Ատենապետ Գարոն Մ- Տէր Յարութեանն, Պուէնոս Այրէսի Մասնաճիւղի Ատենապետ Վահրամ Հայրապետեան եւ Սան Փաուլոյի Մասնաճիւղի Փոխ Ատենապետ Ռիգարտո Պուրմայեան։ Բոլոր նկարները Բաշում են 2004-2005 թթ։



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, ՀԲԸՄԻ Նախագահ Պերն Սեդրակեան, ՀԲԸՄԻ Կեդրոնական Վարչական Ժողովի Անդամներ, Մասնաճիւղերու Ատենապետներ, Նուիրատուներ, անդամներ եւ պաշտօնեաներ հաւաքուած Սր. Էջմիածնի Վեհարանին առջեւ 2004ին, Միութեան 83րդ Ընդհանուր Ժողովին առթիւ:

Նախագահին Պատգամը



Մեր Անդամներուն, Նուիրատուներուն և Բարեկամներուն

ՀԲԸՄ

ի նախագահութեան առանձնաշնորհեալ դիրքովս կրցած եմ Միութեանս լայնատարած գործունէութիւնը դիտել այնպիսի պրիսմայէն, որ քիչերուն մատչելի է: Աշխարհասփիւռ Մասնաճիւղերն ու Դպրոցները այցելելով եւ մեր եռադնուն Ատենապետներուն ու Ներկայացուցիչներուն հետ հարողակցելով վերջին տարիներուն, բազմիցս ու մեծապէս տպատրուեցայ մեր անդամներուն, նուիրատուներուն եւ անձնակազմին ցուցաբերած նուիրումէն եւ ոգիէն: Երկամեայ այս տեղեկագիրը կարդալով, եզակի առիթը կ'ունենամ ՀԲԸՄի աշխարհը տեսնելու, այնպէս ինչպէս եւ զայն կը տեսնեմ, եւ վերջին երկու տարիներու ընթացքին կատարուած մեր բազում իրագործումները լիովին գնահատելու: Աշխարհ մըն է, զորս ՀԲԸՄի հիմնադիր եւ առաջին Նախագահ Պօղոս Նուպար երբեք պիտի չկարողանար պատկերացնել, երբ դար մը ատաջ որոշեց հիմնել կազմակերպութիւն մը, որ բոլոր հայերուն ծառայելէն բացի, հայկական ազգային ինքնութիւնը պիտի պահպանէր եւ յանձնարէր: Համայնք մըն է, տարածուած վեց ցամաքաբաժիններուն վրայ եւ, զանազան միջոցներով, դրական ազդեցութիւն գործած՝ անհամար անձերու վրայ: Այսօր, երբ ուղեմիջ հանդիսացող ՀԲԸՄի 100-ամեակը կը տօնենք, կը շարունակենք հպարտանալ մեր Միութիւնով եւ այն ամբողջութեամբ, զոր կը ներկայացնէ: Այս տեղեկագիրը կարդացած ատեն, կը յուսամ թէ ՀԲԸՄիութիւնը բնորոշող այն վիթխարի դրական ուժէն պիտի ներշնչուիք:

272 միլիոն տղար ընդհանուր դրամագույնով եւ 36 միլիոն տղար տարեկան պիտեւնով, ՀԲԸՄիութիւնը իր դիրքը կը պահէ իբր աշխարհի մեծագոյն ոչ-շահութաբեր հայկական կազմակերպութիւնը: Բազմազան կրթական, մշակութային եւ մարդասիրական ծրագիրներ մատակարարելով, ՀԲԸՄը կը շարունակէ գործօն դեր խաղալ մեր ամէնօրեայ կեանքին մէջ: 73 Մրջանակներ եւ Մասնաճիւղեր, 48 համայնքային կեդրոններ եւ գրասենեակներ, 13 Երիտասարդ Արհեստավար խումբեր, 33 Ամէնօրեայ եւ Շաբաթօրեայ Դպրոցներ, Ուսումնաբոշակի Օրագիր, Ամառնային Համբարներ, Երիտասարդական Շարժումներ, Վարժողական Օրագիրներ, Կատարողական Արուեստներ ու 14 հրատարակութիւններ պարունակող համաաշխարհային ցանցով մը, Միութիւնս կը հասնի անկի քան 400,000 հայերու:

ՀԲԸՄը ծանր աշխատանքի է լծուած իր ստացած նուիրատուութիւններն ու իրեն վստահուած ժառանգութիւնները հայ ժողովուրդի օգտին ծառայեցնելով, այդպիսով մնայուն փոփոխութիւն առաջացնելով աշխարհով մէկ: Պուէնոս Այրէսի եւ Մոնթրէալի կեդրոնները, Գանուկա Փարբի, Տիբրոյթի եւ Մոնթփիլիտէյի դպրոցները, ինչպէս նաեւ Նիւ Եորքի Նուպար Համբարը, նորոգման եւ ընդարձակման ենթարկուեցան՝ ամրապնդելով մեր ներկայութիւնը այս հայաշատ գաղութներուն մէջ: Եւրոպայի մէջ մեր գործունէութիւնը ընդլայնելու նպատակով, Միութիւնս անոր հիմը դրաւ Ֆրանսայի մէջ՝ եւրոպական հայկական համայնքի կեդրոնին մէջ մեր ներկայութիւնը զօրացնելով:

Երկարատեւ մեր ներդրումը Սփիւռքի մէջ առանցքային նշանակութիւն ունի, ինչ կը վերաբերի Հայաստանի հետ ունեցած մեր կապերու զարգացման ու ամրապնդման, մկատի ունենալով որ զգալի ան է կրած մեր Հայրենիքը 15 տարի առաջ անկախութեան ուրախալի հռչակումէն ի վեր: Ազգային մեր ինքնութեան պահպանումի տեսակէտէն գերազանց կարեւորութիւն ունի այն իրողութիւնը, թէ անկախացումէն առդին ՀԲԸՄը 100 միլիոն տղարէն անկի ներդրում ըրած է



Հայերը Տեղեկ կը Պահուին

2004 եւ 2005 թուականներուն, ինչզ նոր հրատարակութիւններ (AGBU VOICE, REVUE ARMÉNIENNE DES QUESTIONS CONTEMPORAINES, UGAB MÉDITERRANÉE, YP CORNER, YERAM) չորս երկիրներու մէջ սկսան տեղական, համաաշխարհային եւ պատմական հարցերու վերաբերեալ տեղեկութիւններ հասցնել հայ հասարակութեան:

Հայաստանը կը Ներկայացուի

ՀԲԸՄի Նորքի Հայորդաց Տան (Երեւան, Հայաստան) ուսանողներ իրենց անդրանիկ ելոյթը ունեցան 2005 Հոկտեմբերին Նիւ Եորքի «Քսուն Հող»ին մէջ: Սոյն ամառն ընթացքին շրջագայեցան եօթը այլ Հիւսիսային Ամերիկեան Բաղամեր: ՀԲԸՄը հպարտութեամբ սատար կը հանդիսանայ հայկական մշակոյթի նոյն արուեստին:

հայրենիքի մէջ - գրեթէ 15 միլիոն տուր վերջին երկու տարուան մէջ - ընթացք տալով զանազան կրթական, կրօնական, մշակութային և մարդասիրական ծրագիրներուն: Ասոնց շարքին կը դասուին Հայորդաց Կեդրոններ, Կարօտեայներու ճաշարաններ, Ս. Էջմիածնի յատուկ ծրագիրներ, Գերմանային Կեդրոն և Հայաստանի Ֆիլիպարմոնիք Նուագախումբ: Յատուկ յիշատակութեան արժանի են այն նպաստները, որոնք կարելի դարձուցին Հայաստանի Ամերիկեան Համալսարանի ընդարձակումը երկու նոր շէնքերու յատկումով: յայտարարուեցաւ նաև որ ՀԲԸՄը ծրագրած է ապագային կառուցել կրթական-մշակութային կեդրոն մը Հայաստանի մէջ, ուր սիրելիք հայ երիտասարդներ պիտի կարողանան իրենց արմատներուն վերադառնալ՝ տեղացի հասակակիցներուն հետ շփման մէջ մտնելով:

Վերջին երկու տարուան ընթացքին կատարուած մի քանի ծրագիրներ կը վկայեն ՀԲԸՄի շարունակական յանձնառութիւնը դրացի Ղարաբաղի՝ պատերազմի ընթացքին քանդուած ենթակառուցները վերականգնելու: Այս ծրագիրներուն մէջ կը հաշուուեն մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ ՀԲԸՄի գրասենեակի բացումը: սենեակային նուագախումբի մը հիմնելն ու սահմանամերձ գիւղերու վերաբնակեցումը: Աշխարհասփիւռ Մասնակիւղերու օգնութեան շնորհիւ, առաջին վերաշինուած գիւղը՝ Նորաշէն՝ տուն կը սեպեն 100 բնակիչներ: Երկրորդ գիւղի՝ Բարեշէնի կառուցումը ընթացքի մէջ է, իսկ երրորդ գիւղի՝ Ջրակնի համար, հանգանակութիւնը սկսուած է:

Միջազգային հայ համայնքի եղավոյսութեան հետ քայլ պահելու յանձնառութեան զուգահեռ, ՀԲԸՄի Կեդրոնական Վարչական Ժողովը ամէնէն սիրտ հասցնող որոշում մը տուաւ, այսինքն Մեյգոնեան Կրթական Հաստատութեան փակումը: Նկատի առնելով թէ Հայ ազգը տեսական փոփոխութեան կ'ենթարկուի, ժողովրդագրական, տնտեսական և ընկերային տեսակէտէն, անոր՝ կրթութիւն ջամբելը հետգիտէ աւելի մեծ մարտահրաւերներ դիմագրաւելու հարց է: Ուստի, իր առաջնութեան ծառայելու վերանորոգ նուիրումով, 2005 թուականին, Կեդր. Վարչութիւնը հանդիմով յայտարարեց իր որոշումը Հարաւային Գալիֆորնիոյ շրջանին մէջ երկրորդ քարձարան վարժարան մը բանալու: Դժուար առնելիք որոշումներ զարգացում և յառաջդիմութիւն կը ներշնչեն հիմա որ 21րդ դարու սեմէն ներս անցնել են, ՀԲԸՄը պատրաստ է ծառայութեան իր աւանդական ուղիէն ընթանալ և անզուգական կանխատեսութեամբ նոր նախագիծեր բանալ:

Ծախֆերուն աւելի քան 70 առ հարիւր կրթական նպատակներուն և երիտասարդական ծրագիրներուն յատկացուելով, պարզ է որ նոր սերունդն է ՀԲԸՄի քարեացա-

կամութեան գլխաւոր նպաստընկալը: Իբր շատագուց մեր հինաւոր լեզուին, մշակոյթին, պատմութեան և կրօնին, պէտք է շարունակենք մշակել այնպիսի նորարարական և յառաջադէմ ծրագիրներ, որոնք նոր սերունդներուն գրաւութիւն կ'ունենան, իրենց ինքնութիւնը իբր հայարտ հայեր կ'ամրացնեն, և զիրենք հայրենիքին հետ կապող տոկուն օղակներ կը ձևեն: Իւրաքանչիւր նոր սերունդ հայկական ինքնութիւնը պահպանելու պարտականութիւնը կը ժառանգէ. և մենք պէտք է պատրաստենք մեր երիտասարդութիւնը որպէսզի այս կենսական գործը կարենայ գլուխ հանել ապագային:

Պէտք է մտահան ընել այն իրողութիւնը, թէ ՀԲԸՄը ձեր շարունակական աջակցութեան կարիքն ունի, և այն բարիքը զորս կրնանք կատարել, ձեզմէ կախում ունի: Հպարտութեամբ կրնանք ըսել որ նուիրատուներուն մեզի հանդէպ ցուցաբերած վստահութիւնը տարուէ տարի կ'աւելնայ, վկայ՝ անող մեր հիմնադրամները: 2005 թուականի տունայնորով, ընդամէնը 946 հիմնադրամներ հաստատուած են Միութեանս տրամադրութեան տակ, մինչդեռ 1995ի տունայնորով միայն 599 հիմնադրամներ կային: Ձեր առատածնուն նուիրատուութիւններով, անհրաժեշտ դեր կը կատարէ՝ ապահովելով ՀԲԸՄի ծրագիրներուն շարունակութիւնը յօգուտ քայլի սերունդներուն: Մեր բազմաթիւ իրագործումները կարելի պիտի չլլային առանց կառավարական, եկեղեցական ու քաղաքացիական կազմակերպութեանց մէջ աշխատող մեր գործընկերներուն, ինչպէս նաև այն անթիւ-անհամար անհատ կամաւոր աշխատողներուն, որոնք հայկական ինքնութիւնը պահպանելու բուն փափաքը նոյնպէս ունին: Համագործակցութեան ու համերաշխութեան միջոցով, քախանձագին կոչ կ'ուղղեմ բոլոր կազմակերպութիւններուն և անհատներուն՝ ՀԲԸՄիութեան միանալու և ապագայի հնարաւորութիւններէն լաւագոյնս օգտուելու համաշխարհային այս առաքելութիւնը յաջողութեամբ պսակելու:

Իբր քարեացականութեան դեպքաններ, պիտի ցոյց տանք աշխարհին թէ որքան ուժեղ է հայկական ոգին և ի՞նչ դրական արդիւնքներու կարելի է հասնիլ, երբ հայերը միասին կ'աշխատին իբրև մէկ անձ:

M. Sargsyan

Պերն Սեդրակեան, Նախագահ



Բոլոր սերունդները Յարգի

Հայաստանի մէջ գործող ՀԲԸՄի կարօտեայներու ճաշարաններէն օգտուող 1,200 թոշակաւորներէն քանի մը հոգի: ՀԲԸՄի մարդասիրական ծրագիրները կ'օգնեն ամէնէն չհատրները:



Տեղական Համայնքներու Զօրացումը

2005 թուականին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Արժանիքի այցելութեան ընթացքին յատուկ ընդունելութեան արժանացաւ Պուէնոս Այրեսի Մարի Մանուկեան Վարժարանի ուսանողներուն կողմէ: Աշխարհատարած հայկական համայնքներուն ողնաշարը կը կազմեն ՀԲԸՄի դպրոցները, մասնակիւղերն ու կեդրոնները:

Աշխարհապիտ ՀԲԸՄիությունը 2004-2005



ԳԱՆԱՏԱ

ԱՆԳԼԻԱ

- Վանգուվեր
- Թորոնթո
Դանիել եւ Ալիս Զարուկեան Վարժարան
Տեսիլք
Երիտ. Շարժում
- Մոնթրեալ
Ոսկեայ Տարիքի Յանձնախումբ
Արմեն Գեյգեր-Ալեք Մանուկեան Վարժարան
ԵՆ Մոնթրեալ
Երիտասարդական Շարժում
- Մի ինգլիզացի Երջանակ
Փողկտրոն Արսև Յանձնախումբ
ԵՆ Գոստոն
- Սիե Երրը
ՀԲԸՄի Կերպրոնական Գրասենյակ
Նի Երրի Ցատուկ Ձեռնարկներու Յանձնախումբ
ԵՆ Մեծն Նի Երրը
Անդրանիկ Պարախումբ
AGBU News
AGBU ENewsletter
Արարատ Եռամսեայ
Յուշարար
Ամստնային Վարժողական Ծրագիր
Նուպար Ճամբար
- Օբլենո-Սան Ֆրանսիսքո
Երիտ. Արհեստավարժներ
- Սիլիքոն Վեյլի
- Ֆրեզնո
- Շիբալո
Շարաթօրեայ Վարժարան
- Գլիվլենո
Շարաթօրեայ Վարժարան
- Ֆիլադելֆիա
ԵՆ Ֆիլադելֆիա
- Հիւսթըն

- ### Հարաւային Գալիֆորնիոյ Երջանակ
- Ասպետներ
 - Կլենտէյլ/Փասադենա
ԵՆ Լու Անճելու
Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիր
Արտասագղ Թատերախումբ
Երիտասարդական Գործունէութիւն
Լու Անճելու - Հայ Կին
 - Օրենն Բաունթի
Շարաթօրեայ Դպրոց
ԵՆ Օրենն Բաունթի
Փայմ Ափրիկա
Սան Տիէկո
 - Սան Ֆերնանտոյի Հովիտ
Մանուկեան-Տեմբրեան Վարժարան
Երիտ. Շարժում

Հիւսիսային Ամերիկա

- ### Ֆրանսայի Երջանակ
- Լիոն
Շարաթօրեայ Վարժարան
Երիտ. Շարժում
 - Մարսէյլ
UGAB Méditerranée
Ամստնային Ճամբար
Երիտ. Շարժում
 - Նիս
Փարիզ
Շարաթօրեայ Վարժարան
ԵՆ Փարիզ
Գողթան Երգչախումբ
Անագանց Թատերական Խումբ
Նուպարեան Գրադարան
Revue Arménienne des Questions Contemporaines
Ամստնային Վարժողական Ծրագիր
Երիտ. Շարժում
 - Վալանս
Երիտ. Շարժում
 - Վիէն
Շարաթօրեայ Վարժարան
Երիտ. Շարժում
 - Սէն Ծամոն
Երիտ. Շարժում

- ### ԿԻՊՐՈՍ
- Լաոնաքա
 - Լիմասոլ
 - Նիկոսիա
Սելգոնեան Կրթական
Հաստատութիւն
Երիտ. Շարժում


Հարաւային Ամերիկա

- ### ՊԱՆԱՄԱ
- Սան Փաուլո
Փառէն եւ Ռեճինա Պազարեան Վարժարան
Երիտ. Շարժում
 - Գորտուպա
Արարատ Պարախումբ
Երիտ. Շարժում
 - Մոնթեվիտո
Նուպարեան-Մանուկեան Վարժարան
Կոունկ Երգչախումբ
Երիտ. Շարժում
 - Պուէնոս Այրես
Մարի Մանուկեան Վարժարան
Շնորհալի Երգչախումբ
Generación 3
Երիտ. Շարժում

- ### Լիբանանի Երջանակ
- Պոլոս Գ. Կարմիրեան
Վարժարան
 - Դարուհի-Յովակիմեան
Վարժարան
 - Լեոն Կ. Նազարեան
Վարժարան
 - Երիտ. Արհեստավարժներ
Կենտրոնի Յանձնախումբ
Պարախումբ
Վահրամ Փափազեան
Թատերախումբ
 - Խօսնակ**
YP Corner (ԵՆ Անկիւն)
Բուժարան
Երիտ. Շարժում
 - Թրիփոլի
Երիտ. Շարժում
 - Զահլէ
Երիտ. Շարժում

- ### Սուրիոյ Երջանակ
- Հալէպ
Լազար Նաճարեան-
Գալուստ Կիլպէնկեան
Սարեան Նկարչական
Ակադեմիա
Հալէպը
Երիտ. Շարժում
 - Դամասկոս
Կիլլայի Կիլպէնկեան
Վարժարան
Երամ
Երիտ. Շարժում
 - Գամիշլի
Շարաթօրեայ Վարժարան
Աղթամար Պարախումբ
Երիտ. Շարժում
 - Քեսապ
Ամստնային Ճամբար
Լաթաքիա
Եագուպիէ

ՀԲԸՄը տարեկան 400,000 հայերու կը հասնի իր կրթական, մարդասիրական եւ մշակութային յայտագիրներով:



Գիւմրի
 +Ս. Յակոբ Եկեղեցի Յիւններու Կեդրոն

Էջմիածին
 +Էջմիածին Հայորդաց Կեդրոն
 +Մայր Տաճարի Արտաքին Խորան
 +Կղերականներու Բնակարան
 +Կարօտեալներու Ճաշարան

Վանաձոր
 +Վանաձոր Հայորդաց Կեդրոն
 +Ս. Գրիգոր Նարեկ Եկեղեցի

Սեւան
 +Վազգէնեան Ծամբար
 +Կարօտեալներու Ճաշարան

Ստեփանակերտ Երկրորդ - Վարժարան #7
 Զոհուած Ազատամարտիկներու Բնակարան
Ղարաբաղի Սեռեկային Նուագախումբ

Հրազդան
 +Կարօտեալներու Ճաշարաններ

Երեւան
 +Երեւանի Եկեղեցի

Երեւան
 +Արաբկիրի Հայորդաց Կեդրոն
 +Մալաթիայի Հայորդաց Կեդրոն
 +Նորքի Հայորդաց Կեդրոն
 Հայաստանի Ամերիկեան Համալսարան Երեւանի Պետական Համալսարան
 +Արաբկիր Եկեղեցի
 +Ս. Երրորդույթին Եկեղեցի
 +Ս. Գրիգոր Մայր Տաճար
 +Ս. Սարգիս Եկեղեցի
 +Երեք կարօտեալներու Ճաշարաններ
 Հայաստանի Ֆիլհարմոնիք Նուագախումբ
 +Ս. Ներսէս Մեծ Հիւանդանոց
 Գերձայնային Ախտաճանաչման Կեդրոն

Նորաշեն Բարեշեն Ղարաբաղի Վերաբնակեցման Ծրագիր

Յունաստանի Օրջ. Յանձնաժողով Արթուրի Գալփաքեան Վարժարան Երիտ. Ծարժում

- ✳ Պուրկաս Տոարիչ Շարափօրտայ Վարժարան
- ✳ Հաւքովո Շարափօրտայ Վարժարան
- ✳ Կոմիտաս Երգչախումբ Երիտասարդաց թատերախումբ
- ✳ Փոլվտի Շարափօրտայ Վարժարան
- ✳ ԵՍ Փոլվտի Միրաժ Պարախումբ
- ✳ Էրեւանի Երգչախումբ
- ✳ ՀԲԸՄի Չալց Ամառնային Ծամբար Երիտ. Ծարժում
- ✳ Բուսէ Շարափօրտայ Վարժարան
- ✳ Սիլիսթրա Շարափօրտայ Վարժարան
- ✳ Սիլվրն Շարափօրտայ Վարժարան
- ✳ Սոֆիա ԵՍ Սոֆիա Երիտ. Ծարժում
- ✳ Վարնա Եամպոլ Շարափօրտայ Վարժարան
- ✳ Աուալտ Երգչախումբ

Հայաստան եւ Ղարաբաղ

ՈՒՂԵՆԾԱՆ

ԵՐԿԻՐ Երկիրներ ուր Կրթանպաստ ատացող համալսարանականներ կ'ուսանին

- ✳ Օրջանակային Յանձնաժողով
- ✳ Մասնաճիւղ/ Յանձնախումբ
- Կեդրոն
- Վարժարան
- Շարափօրտայ Վարժարան
- Համալսարան
- Երիտ. Արճեստավարժներ (ԵԱ)
- Խորհրդատուական Ծառայութիւն
- ✳ Ս. Էջմիածնի հետ գործակցաբար
- Բարեհրական Ծրագիրներ
- Մշակութային Ծարժում
- Հրատարակչական
- Բժշկական Ապաստարկութիւն
- Ամառնային Ծամբար
- Ամառնային Վարժողական Ծրագիր
- Երիտ. Ծարժում (Ակադ/մարզական/ընկերային)

Ափրիկե/Ասիա/Աւստրալիա

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՐԶԱՆԱԿ

- ✳ Աղեքսանդրիա Երիտ. Ծարժում
- ✳ Գահիրէ Մարդասիրական Յայտագիր Տեղեկատու
- ✳ Հելիոպոլիս Երիտ. Ծարժում

Սիւնի Ալեքսանտր Նախակրթարան Ծարափօրտայ Դպրոց Միութիւն Երիտ. Ծարժում

Մելբուրն Երիտ. Ծարժում



Երկամեայ Տեղեկագիր 2004-2005

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Դեկտեմբեր 31

ԳՈՅՔ	2005	2004
Ընթացիկ Գոյք		
Իրամատան մէջ պատրաստ Արժեքուղթեր	\$ 5,635,600	\$ 6,356,227
Գանձելի աւանդներ/հաշիւներ	182,759,988*	178,184,358*
Գանձելի տոկոս	11,392,153	2,240,601
Գումար	1,656,530	1,050,659
	201,444,271	187,831,845
Անշարժ կալուածներ	69,038,791	67,905,185
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր	1,873,558	2,087,184
Գումար Գոյքի	272,356,620	257,824,214
ՊԱՐՏՔԵՐ ԵՒ ԶՈՒՏ ԳՈՅՔ (ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ)		
Պարտականք		
Վնարելի հաշիւներ	\$5,519,636	\$4,840,063
Վնարելի պարտաթուղթեր	641,756	770,863
Գումար Պարտքերու	6,161,392	5,610,926
Զուտ Գոյք (Հիմնադրամներ)		
Ոչ պայմանաւորեալ	55,939,248	56,048,043
Առժամապէս պայմանաւորեալ	36,044,965	26,190,271
Պայմանաւորեալ	174,211,015	169,974,974
Գումար Զուտ Գոյքի (Հիմնադրամներու)	266,195,228	252,213,288
Գումար Պարտականքներու եւ Զուտ Գոյքի (Հիմնադրամներ)	272,356,620	257,824,214

*Կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան արժեքուղթերու տոմարական արձանագրութիւնը 12/31/04-ին եւ 12/31/05-ին որոնց սակարանային արժէքը յաջորդաբար Ամերիկեան Տոլարով \$185,769,957 եւ \$187,772,570 են

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Երկամեայ Տեղեկագիր
10-Տարուայ Բաղդատական Գումարներուն

	2005	%	2004	**%	1994
Ընդհ. Գոյք	\$272,356,620	5.64	\$257,824,214	60	\$161,433,299
Ընդհ. Մուտք	49,842,247	22.98	40,527,685	44	28,108,564
Ընդհ. Ելք	35,860,307	0.51	34,108,761	27	26,841,607

Միամեայ (*%) Յաւելում/Նուագում 10-ամեայ (**%) Յաւելում/Նուագում

Ամերիկեան Տոլարով

ՄՈՒՏՔ

Օժանդակութիւն՝
Նուիրատուութիւններ
Անդամավճար
Յատուկ Զեռնարկներ

Հասոյթ՝

Շահաբաժին եւ տոկոս
կալուածային
Դպրոցական

ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
Վարչական Հասոյթ, Պահեստի
Գումար եւ Հիմնադրամի Յաւելում
ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ

ԵԼՔ

Յայտագիրներ եւ Վարչական Ծախք
Յայտագիրներ՝

Կրթական
Մշակութային
Կրօնական
Մարդասիրական

Վարչական Ծախք
Իրամահաւաքի Ծախք
Իրամասակային Տարբերութիւն/
Վերադասաւորում

Գումար՝ Յայտագիրներ եւ
Վարչական Ծախք

Յաւելում (Նուագում) Ելեմուտքի

Միջ հիմնադրամային փողանցում
Յաւելում (Նուագում) Հիմնադրամներու

Հիմնադրամներ՝ տարեսկիզբին

Հիմնադրամներ՝ տարեվերջին

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

ԵԼՈՒՄՈՒՏՔ

Ա.Ռ Դեկտեմբեր 31, 2005				Ա.Ռ Դեկտեմբեր 31, 2004			
Ոչ Պայմանաւորեալ	Առժամապէս Պայմանաւորեալ	Պայմանաւորեալ	Գումար	Ոչ Պայմանաւորեալ	Առժամապէս Պայմանաւորեալ	Պայմանաւորեալ	Գումար
\$ 1,702,022	\$ 17,370,070	\$ 3,556,352	\$ 22,628,444	\$ 1,985,610	\$ 6,906,238	\$ 4,596,331	\$ 13,488,179
308,468	-	-	308,468	342,859	-	-	342,859
2,721,588	-	77,354	2,798,942	3,073,364	-	77,547	3,150,911
4,732,078	17,370,070	3,633,706	25,735,854	5,401,833	6,906,238	4,673,878	16,981,949
9,906,722	1,579,375	-	11,486,097	10,380,094	1,371,016	-	11,751,110
2,110,447	6,934	-	2,117,381	1,332,837	-	-	1,332,837
10,502,915	-	-	10,502,915	10,461,789	-	-	10,461,789
22,520,084	1,586,309	-	24,106,393	22,174,720	1,371,016	-	23,545,736
27,252,162	18,956,379	3,633,706	49,842,247	27,576,553	8,277,254	4,673,878	40,527,685
10,204,509	(10,204,509)	-	-	6,750,587	(6,750,587)	-	-
1,600,982	(1,692,775)	91,793	-	1,266,530	(1,359,284)	92,754	-
39,057,653	7,059,095	3,725,499	49,842,247	35,593,670	167,383	4,766,632	40,527,685
19,154,221	-	-	19,154,221	17,649,922	-	-	17,649,922
7,082,133	-	-	7,082,133	7,057,599	-	-	7,057,599
4,213,112	-	-	4,213,112	4,737,179	-	-	4,737,179
2,519,140	-	-	2,519,140	1,873,602	-	-	1,873,602
32,968,606	-	-	32,968,606	31,318,302	-	-	31,318,302
2,577,928	-	-	2,577,928	2,317,584	-	-	2,317,584
236,528	-	-	236,528	247,680	-	-	247,680
77,245	-	-	77,245	225,195	-	-	225,195
2,891,701	-	-	2,891,701	2,790,459	-	-	2,790,459
35,860,307	-	-	35,860,307	34,108,761	-	-	34,108,761
3,197,346	7,059,095	3,725,499	13,981,940	1,484,909	167,383	4,766,632	6,418,924
(3,306,141)	2,795,599	510,542	-	(4,266,581)	4,330,510	(63,929)	-
(108,795)	9,854,694	4,236,041	13,981,940	(2,781,672)	4,497,893	4,702,703	6,418,924
56,048,043	26,190,271	169,974,974	252,213,288	58,829,715	21,692,378	165,272,271	245,794,364
\$55,939,248	\$36,044,965	\$174,211,015	\$266,195,228	\$56,048,043	\$26,190,271	\$169,974,974	\$252,213,288



2004 թուականին Հայաստանի մայրաքաղաք Երևան կայացած ՀԲԸՄի Ընդհանուր ժողովին մասնակցող Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄի Կեդրոնական վարչական ժողովի Անդամները:

ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Հայաստանի Ֆիլիալումնիք
Նուագախումբ
Հայորդաց Կեդրոններ (Արարկիր, Մալաթիա, Նորք)
Ս. Էջմիածին
Վազգենյան Աստուածարանական Ընծայարան Կարօտեալներու Հաշարաններ (6)
Ս. Ներսէս Մեծ Հիւանդանոց Գերազայնային Ախտանանաչման Կեդրոն
ՂԱՐԱԲԱՂ
Ղարաբաղի Սենեկային Նուագախումբ
Ղարաբաղի Վերաբնակեցման Ծրագիր

ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Արարկիրի եկեղեցի
Գիւմրիի Յոյի Կանանց Կեդրոն
Էջմիածնի Հայորդաց Կեդրոն
Էջմիածնի Մայր Տանարի Արտաբին Խորան
Էրեբունի եկեղեցի
Կորեականներու Բնակարաններ
Էջմիածնի մէջ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տանար
Ս. Գրիգոր Նարեկ եկեղեցի
Ս. Երրորդութիւն եկեղեցի
Ս. Յակոբ եկեղեցի
Ս. Սարգիս եկեղեցի
Վանաձորի Հայորդաց Կեդրոն

ՂԱՐԱԲԱՂ

Ստեփանակերտ Դպրոց թիւ 7
Բնակելի տուններու համալիր գոտում ազատամարտիկներու այրիներուն եւ վնասներուն համար

ՅԱՏՈՒԿ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ


ՀԱՅԱՍՏԱՆ

Երևանի Պետական Համալսարան Այնթապ Դպրոց թիւ 2
Գիւմրի Դպրոց թիւ 3 անկարողներու համար
Գիւմրի Դպրոց տեսողական խանցարումներու համար
Ժամկետային Դպրոց Իրինդ Գիւղի Դպրոց
Մեղրի Մանկապարտեզ
Հայաստանի Պետական Օլիմպիա Ամառիա Գիւղ Ստանտոնի Մասնաճիւղ
Համբարդական Տեսաժայռէնի Ծրագիր
Հեռատեսիլի Համար Հայաստանի Գրողներու Միութիւն

ՂԱՐԱԲԱՂ

Արցախի Թեմ
Վերականգնումի Կեդրոն
Հիւսիս-Հարաւ Հանրուղիի շինարարութիւն

Հայաստան



Տեսարան մը Հայաստանի Ամերիկեան Համալսարանի համալիրէն: Աջին՝ մայր շէնքը, կեդրոն՝ Փարամագ Աւետիսեան անուան շէնքը կը կառուցուի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պատրաստելով Հայաստանի Ապագայ Ղեկավարներ

2004 եւ 2005 Հոկտեմբերին, Հայաստանի Ամերիկեան Համալսարանի 13րդ եւ 14րդ Շրջանաւարտութեան Հանդիսութեանց, մօտաւորապէս 300 շրջանաւարտներ միացան գրեթէ 1,400 հաշուուող համալսարանին սաներու-սանուհիներու փաղանգին: Համալսարանի վերջնագոյն իրագործումներուն մէջ կարելի է հաշուել Վարդգէս եւ Համիկ Պարսամ անուան շէնքը: այս հանրակացարանով, Հայաստանի Ամերիկեան Համալսարանը հնարաւորութիւն կ'ունենայ շրջաններէն ու արտասահմանէն եկող ուսանողներուն թիւը շատցնել: Իսկ երկրորդ իրագործումը եղաւ հիմնարկէքը Փարամագ Աւետիսեան անուան շէնքին, որ դիւրութիւններ պիտի հայթայթէ կրթական զարգացման եւ հետազոտական աշխատանքներուն: Տարեկան գրեթէ 400 ուսանողներ արձանագրուած են ՀԱՀ-ի 2-տարուայ ծրագրին, ընդ որուն Մագիստրոսի աստիճանի կը վաստակին այնպիսի ներուքներ մէջ, ինչպիսիք են Առեւտրական Տնտեսութիւն, Համակարգչի Գիտութիւն, Բնութեան Պահպանում եւ Միջավայրի Գիտութիւն, Հարտարագիտութիւն, Իրաւաբանութիւն, Գաղափարական Գիտութիւն եւ Միջազգային Հարցեր, եւ Հանրային Առողջապահութիւն:

Հայաստանի Ֆիլիալումնիք Նուագախումբը

Երկու Մֆանչելի Տարեշրջաններ կը Բոլորէ

2004 եւ 2005 տարեշրջաններուն, շարք մը տպաւորիչ շարքական համերգներով, Հայաստանի Ֆիլիալումնիք Նուագախումբը ներագոյեցիկ ուժ մը հանդիսացաւ Երևանի մշակութային կեանքէն ներս: Հոկտ. 2004ին ՀՖՆը, Հայաստանի Պետական Ա.Կադեմական Երգչախումբի ընկերակցութեամբ, Անգարա ժամանեց. Պոլիս ծնած Մաւեսթո Յովհաննէս Զէքիանեանի ղեկավարութեամբ, միասնական ելոյթ ունեցան աւելի քան 2,200 հանդիսատեսներու ներկայութեամբ: Սոյն համերգը իր տեսակին մէջ առաջինն է, որ տեղի ունեցաւ Թուրքիոյ մշակութային մայրաքաղաքին մէջ: Յուլիս 2005ին ՀՖՆի Սենեկային Նուագախումբն ալ հրաւիրուեցաւ ելոյթ ունենալ Պիլատս Փառատոնին: Լիբանան: 2005 տարեշրջանի ՀՖՆի ամէնէն յիշատակելի համերգներու շարքին պէտք է դասել այն ելոյթները, որոնց մասնակցեցան նշանաւոր իտալացի պարիթոն՝ Ռենաթօ Պրուտտի, եւ գանատահայ սոփրանօ Իգալէլ Պայրազտարեան, ղեկավարութեամբ միշտ Արուեստագիտական Տնօրէն եւ Գլխաւոր Ղեկավար Եդուարդ Թոփանեանի:



Ամերիկացի երաժշտապետ Առլեֆանդը Թրէյկըր Հայաստանի Սինֆոնիք Նուագախումբի հիւր ղեկավարն էր Յունիս 3, 2005ին տեղի ունեցած համերգին:

Վերջին երկու տարիներու ընթացքին, հագարաւոր բարերարներ եւ նուիրատուներ, իրենց առատաձեռնութեամբ, անգամ մը եւս զօրավիգ կանգնեցան ՀԲԸՄիութեան, ապահովելով անոր շարունակական ներկայութիւնը հայրենիքին մէջ: Երեսնի եւ Ստեփանակերտի իր գրասենեակներու միջոցով, Միութիւնը կը մատակարարէ երկար եւ պէսպիսուն շարք մը կրթական, բարեսիրական եւ մշակութային ծրագիրներ, որոնցմէ կ'օգտուին անթիւ եւ անհամար հայորդիներ:

Նորքի, Արարկիրի եւ Մալաթիայի Հայորդաց Կեդրոններ

Կրթութիւն կը ջամբեն նոր սերունդին տաղանդաւոր ներկայացուցիչներուն

1993էն ի վեր, անլի քան 3,000 տաղանդաւոր երախաներ եւ կատարներ, 6էն 16 տարեկան, Արարկիրի, Մալաթիայի եւ Նորքի Հայորդաց Կեդրոնները յանախած են: Հոն ոչ միայն արուեստի, համակարգչի, ձեռագործի, պարի, մարմնամարզութեան, պատմութեան, լեզուներու եւ երաժշտութեան դասերուն հետեւած են արտադպրոցական ժամերուն, այլ մասնակցած են նաեւ շարաքական եկեղեցական արարողութեանց եւ Ս. Գրոց սերտողութեան դասընթացներուն, որոնք տեղի կ'ունենան յարակից մատուցներուն մէջ: Սեպտեմբեր 2004ին, Նորքի Կեդրոնի Կրկէսային Խումբէն երկու մարզորդ մասնակցեցան Մոլտովայի Դելփեան Խաղերուն, եւ ոսկի ու արծաթ մետալ շահելով վերադարձան տուն: Նոյն ամսուն Թեհրան կայացած Միջազգային Հատրակի մրցումին, Արարկիրի Կեդրոնի նատրակի դասարանը ոսկի մետալ շահեցաւ: Առանկ, 2005ի Հոկտեմբերին Նորքի Հայորդաց Կեդրոնի ուսանողութիւնը շրջագայութիւն ըրաւ Հիւս. Ամերիկայի մէջ, եօթը քաղաք այցելելով (տես էջ 16):

Կարօտեալներու Հաշարաններ Օգնութեան ձեռք կը մեկնին

Երեսնի, Սեւանի, Էջմիածնի եւ Հրազդանի մէջ գտնուող ՀԲԸՄի վեց Կարօտեալներու Հաշարանները կը շարունակեն օրական մէկ քաշ հայթայթել անլի քան 1,200 թոշակաւորներու եւ որբերու: Ասկէ գատ, անոնք յանախ նոյն ուսելիքներէն բաժին մը տուն կը տանին ընտանեկան պարագաներու եւ բարեկամներու համար: Իսկ կամաւոր աշխատողներ կերակուր կը բաշխեն անոնց, որոնք հիւանդ են կամ անկարող տունէն ելլելու:

Գերձայնային Կեդրոն

Գերարդիական բժշկական հաստատութիւն

Վերահասու ըլլալով այն իրողութեան, թէ Հայաստանի բժիշկները կարիք ունին արդի բժշկութեան արձանագրած յաւաքդիմութեանց հետ քայլ պահելու, ՀԲԸՄի բարերար մը 2005ին CT SCAN մեքենայ նուիրեց Գերձայնային Կեդրոնին: Կեդրոնը, որ հաստատուած էր 2000ին, Երեսնի Բժշկական Ինստիտուտէն ներս՝ Soft- Լետն Նագարեանի կողմէ (Ֆիլատելֆիոյ Ճէֆրըսըն Համալսարանի Հիւանդանոցի Ինստիտուտութեան Փրոֆէսոր), կը ծառայէ թէ՛ ուսանողներուն եւ թէ՛ բժիշկներուն, որոնցմէ ոմանք, հոն կրթութիւն ստանալու համար կու գան հեռաւոր Զինաստանէն, Հնդկաստանէն եւ Ռուսաստանէն: Այդ թուականէն ստղին, մօտաւորապէս 50 բժիշկներ վարժութիւն ստացած են վկայականի ծրագրով, իսկ անլի քան 30 ուսանողներ մասնակցած են վարժողական ծրագրին:

Վագգէնեան Հնմարան

Սեւանայ Լիւնի ափին՝ հոգեւոր ովասիս

Սեւանայ Լիւնի ափին գտնուող Վագգէնեան Հնմարանի հանրակացարանին քացումը կատարուեցաւ Հոկտ. 2004ին, շնորհիւ նուիրատուի մը հովանաւորութեան: Բոլորովին նոր այս շէնքը կը բաղկանայ անձնակազմի սենեակներէ, գրասենեակներէ, գրադարանէ եւ հարիւրի չափ դպրեվանքի ուսանողներու բնակութիւն հայթայթող սենեակներէ: Շէնքը մաս կը կազմէ անլի մեծ համալիրի մը, որ կոչուած է կրօնական դաստիարակութիւն եւ պատրաստութիւն ջամբելու կղերականներուն, որոնք ապագային աշխարհասփիւռ հայ գաղութներուն իրենց ծառայութիւնը պիտի բերեն:



Դասաւանդութիւն Հայորդաց Տուններէն մէկուն մէջ:




Հայաստան գործող ՀԲԸՄի վեց կարօտեալներու հաշարաններէն մին:



Հայաստան տեղի ունեցած ՀԲԸՄի 83րդ Ընդհանուր Ժողովի օրերուն, Երիտասարդ Արեւմտափարձներ այցելեցին Երեսնի Պետական Բժշկական Համալսարանին մաս կազմող Գերձայնային Կեդրոնը:

Ղարաբաղ



ՀԲԸՄը Նոր Ներկայացուցչական Գրասենյակ կը Բանայ Ստեփանակերտի Մէջ

Տրուած ըլլալով որ ՀԲԸՄը լայն ներդրում կ'ունենայ Ղարաբաղի տնտեսական, կրթական եւ մշակութային ենթակառոցներու վերականգման աշխատանքին, Ստեփանակերտի մէջ ՀԲԸՄի նոր գրասենյակի բացումը կատարուեցաւ 2004ին:



Ղարաբաղի Սենեկային Նուագախումբը, Գեորգ Մուրատեանի ղեկավարութեամբ, ելոյթ կ'ունենայ Երեւանի Արամ Խաչատուրեան աւուան Համերգասրահը:

Առաջին Համերգը Ղարաբաղի Սենեկային Նուագախումբին Ելոյթներ կ'ունենայ նաեւ Հայաստանի մէջ

Ղարաբաղի Նախագահ Արկաղի Ղուկասեանի խնդրանքով, ՀԲԸՄը հիմնեց Ղարաբաղի Սենեկային Նուագախումբը (ՂՄՆ), որուն նպատակն է զարկ տալ նորարարոջ հանրապետութեան մշակութային կեանքին: Մինչ ՂՄՆ-ի անդրանիկ համերգը տեղի ունեցաւ Ստեփանակերտ Հոկտեմբեր 2004ին, Երեւանի մէջ գումարուած 83րդ Ընդհանուր Ժողովի արարտին, սոյն նուագախումբը իր առաջին երեւանեան համերգը տուաւ Յունիս 2005ին: Տեղացի երիտասարդներուն երաժշտական տաղանդներուն զարգացման

աստար հանդիսանալու մտօք, 17 ՂՄՆի երաժիշտներէն ունանք, որոնցմէ 11-ը Հայաստանէն Ղարաբաղ տեղափոխուեցան, սկսած են դաստանդել Ստեփանակերտի Երաժշտանոցը, ինչպէս նաեւ Շուշի եւ Լաչին գտնուող երաժշտական թեմում ունեցող դպրոցները:

Արցախի Վերաբնակեցման Ծրագիր Հայերը Վերադարձնել Իրենց Տուները

Արցախի Վերաբնակեցման Ծրագիրը նկատելի ծաւալում կը շարունակէ արձանագրել Հաղործ Մարզէն ներս, շնորհիւ Միութեան աշխարհացրիւ Շրջանակներու եւ Մասնաճիւղերու աջակցութեան, քանի որ յորրն ալ կը բաժնեն ՀԲԸՄի մտապատկերը, որն է՝ տասնեակ հազարաւոր հայերով վերաբնակեցնել Արցախի այն գիւղերը, որոնք պատերազմի ընթացքին քարոտանդ եղան:

Նորաշէն. 2002ին, Ֆրանսայի Շրջանակը ձեռնարկեց ՀԲԸՄի առաջին գիւղի վերաբնակեցումը, 100 բնակիչի համար (ներառեալ 32 դպրոցական տարիք ունեցող երախաներ եւ 14 նախադպրոցական տարիք ունեցողներ) 23 տուն կառուցանելով:

Բարեշէն. Շնորհիւ Մեծն Բրիտանիոյ գաղութի անդամներու առատաձեռն նուիրատուութիւններուն, որոնց գումարը ՀԲԸՄի Լոնտոնի Թրասթի կողմէ կրկնուեցաւ, Լոնտոնի Մասնաճիւղը կամայ ձեռնարկեց երկրորդ գիւղի վերաշինութիւնը, հիմա որ առաջին փուլը ընթացքի մէջ է: Ղարաբաղի Իշխանութիւններն ու Լոնտոնի Մասնաճիւղը միասնաբար պատասխանատուութիւնը ստանձնած են ջուր եւ էլեկտրականութիւն հայթայթելու Բարեշէն գիւղին, իսկ տեղական իշխանութիւններն ալ մամբայ մը պիտի շինեն գիւղը այլ գիւղերուն եւ մարզերուն հետ կապելու համար:

Ջրակն. 2005ին հանգանակութիւն սկսուաւ ՀԲԸՄի երրորդ այս գիւղին համար: 100,000 տոյար արդէն յատկացուած է եւ յաւելեալ խոստումներ տրուած են ԱՄՆ բնակող անդամներու կողմէ: Սկզբնական նպատակն է տասը տուն շինել, որով աւելի մեծ թիւով հայեր այդ շրջանը փոխադրուելու պիտի ֆաջալերուին:

Երբ ՀԲԸՄի գիւղերն ալ պիտի օգտուին Նորաշէնի բուժարանէն, մանկապարտէզէն ու նախակրթարանէն, ինչպէս նաեւ Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակի եւ Սիւնիի Մասնաճիւղին կողմէ հովանաւորուած երկրորդական վարժարանէն:



Ղարաբաղի պատերազմի վեթերաններու եւ զոհուած զինուորներու այրիներուն համար կառուցուած յարկարածնի շէնքն ու ժողովարանը:



Ստեփանակերտի թիւ 7 երկրորդական վարժարանը



Ալեք Մանուկեանի յուշարձանը, Ալեք Մանուկեան փողոց, Ստեփանակերտի կեդրոնը:



Նորաշէնի դպրոցը կը կառուցուի:



Մայիս 4, 2005, Նորաշէնի բուժարանի բացումը: (ձախէն աջ) Ղարաբաղի Փոստ-Նախագահ Արարատ Դանիելեան, Ղարաբաղի Առողջապահութեան նախարար Զոյա Լազարեան, Աւագանի տեղական ինքնավար մարմնի ներկայացուցիչ, Ֆրանսահայ Բժիշկներու Միութեան Նախագահ Լեւոն Արթինեան, եւ ՀԲԸՄի Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովի անդամ Արա Ահարոնեան:

ՀԲԸՄԻ Վարժարաններ

ԱՄՆ

- Գանուկա Փարֆ, Գալիֆ. Մանուկեան-Տեմիրյան Վարժարան (K-12)
- Տիթորոյթ, Միշ. Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան (K-12)
- Շիբակո, Իլ. Միսակ Յ. Վարժապետեան Շարաքօրեայ Վարժարան
- Գլիլիենտ, Օհ. Շարաքօրեայ Վարժարան
- Գոսթա Մեսա, Գալիֆ. Օրէնն Բաունթի Շարաքօրեայ Վարժարան

Արժանքին

- Պուէնոս Այրէս Մարի Մանուկեան Վարժարան (K-12)

Աւստրալիա

- Ալեքսանտր Նախակրթարան (K-6)
- Ալեք Մանուկեան Շարաքօրեայ Դպրոց

Գանատա

- Մոնթրէալ Արմէն Գէպեֆ-Ալեք Մանուկեան Վարժարան (K-8)
- Թորոնթօ Դանիլ եւ Ալիա Զարուկեան Վարժարան (K-6)

Իրան

- Թեհրան Մարի Մանուկեան Վարժարան (1-5)
- Նուարդ Կիլպէնկեան Վարժարան (9-12)

Իրաք

- Պաղտատ Բուրաստան Ուրբաքօրեայ Վարժարան

Լիբանան

- Պէյրութ Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան (K-9)
- Դարուհի-Յովակիմեան Վարժարան (7-12)
- Լեւոն Կ. Նազարեան Վարժարան (K-6)

Յունաստան

- Աթէնք Արթամի Գալիամեան Վարժարան (K-6)

Կիպրոս

- Նիկոսիա Մեղգոնեան Կրթական Հաստատութիւն (6-12)

Ուրուկուէյ

- Մոնթեվիտէօ Նուպարեան-Մանուկեան Վարժարան (K-12)

Պուկարիա

- Տոպրիչ Շարաքօրեայ Վարժարան
- Համոնի Շարաքօրեայ Վարժարան
- Փոլտիւ Շարաքօրեայ Վարժարան
- Ռուսէ Շարաքօրեայ Վարժարան
- Միլիսթրա Շարաքօրեայ Վարժարան
- Սիլվըն Շարաքօրեայ Վարժարան
- Յամպոլ Շարաքօրեայ Վարժարան

Պրագիլ

- Սան Փաուլօ Փատէն եւ Ռենինա Պագարեան Վարժարան (K-8)

Սուրիա

- Հալէպ Լազար Նանարեան-Գալուստ Կիլպէնկեան Վրժ. (K-12)
- Դամասկոս Կիլլապի Կիլպէնկեան Վարժարան (K-6)
- Գամիշլի Շարաքօրեայ Վարժարան

Ֆրանսա

- Փարիզ Ալեք Մանուկեան Շարաքօրեայ Վարժարան
- Լիոն Շարաքօրեայ Վարժարան
- Վիէն Շարաքօրեայ Վարժարան

Ամէնօրեայ վարժարանները ներակ են: Միօրեայ վարժարանները մոխրագոյն:

Կրթական Գործունէութիւններ

ՀԲԸՄԻ կրթական աշխատանքները, որոնցմէ մօտ 7,000 ուսանողներ կ'օգտուին, նպատակ ունին պատրաստելու աւելի քան 37 երկիրներու մէջ ապրող հայ երիտասարդներ, որպէսզի իրենց ապագան յաջող ըլլայ: Թէ իր քանի մը տասնեակ տարիներ առաջ հաստատուած Ուսումնաթոշակի Ծրագրով, որ իրատ որակեալ թեկնածուներուն պարգեւ եւ փոխառութիւն կը յատկացնէ, եւ թէ Նիւ-Եորքի եւ Փարիզի Ամառնային Վարժողական Ծրագիրներով, ՀԲԸՄը հաստատ հաւատացողն է կրթութեան կարեւորութեան եւ արժէքին: Իրօք, Միութեանս հաստատութիւններուն մէջ կը հաշուրեն Հայաստանէն դուրս գործող երկու մեծագոյն ամէնօրեայ դպրոցները - Հալէպի (Սուրիա) Լազար Նանարեան-Գալուստ Կիլպէնկեան Վարժարան (աւելի քան 1,400 աշակերտներով) եւ Գանուկա Փարֆի (Գալ.) Մանուկեան-Տեմիրյան Վարժարան (950 աշակերտներով):

Ուսումնաթոշակի Ծրագիր

2004 եւ 2005 թուականներուն, աւելի քան \$2,043,000 քաշխուսեցաւ, իբր պարգեւ կամ փոխառութիւն, 1,500է աւելի ուսանողներու 29 երկիրներէ: Սոյն ուսանողները, ըլլան ընթացաւարտցու (գոլէնի) կամ ընթացաւարտ, առ հասարակ անուանի կրթական օճախներ կը յանախեն այնպիսի նիւղերուն հետեւելով, ինչպիսին են բժշկութիւն, արուեստ, իրաւաբանութիւն եւ հայագիտութիւն: Վերոյիշեալ գումարէն գրեթէ կէսը յատկացուցաւ ուսումնաթոշակներու՝ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը յանախող եւ ընթացաւարտ աստիճան հետապնդող թեկնածուներուն:

ԱՄՆ	Զուիցերիա	Հայաստան	Յորդանան
Անգլիա	Թուրքիա	Հոլանտա	Ուրուկուէյ
Արժանքին	Իտալիա	Հունգարիա	Պէլճիգա
Աւստրալիա	Իրան	Ճափոն	Պուկարիա
Աւստրիա	Իրաք	Միացեալ	Չինաստան
Գանատա	Լեհաստան	Արաբ.	Սուրիա
Գերմանիա	Լիբանան	Վեհապե-	Ֆրանսա
Երուսաղէմ	Կիպրոս	տութիւններ	



ՀԲԸՄԻ Թորոնթոյի Մասնաճիւղի վարչականներ եւ ղեկավարներ 2004 ուսումնաթոշակ ստացողներուն հետ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼԻ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ

Դպրոցներու Ընդարձակումներ – Նորոգումներ

Ապրիլ 2004—300էն անլի տեղացի ազգայիններ համախմբուեցան ՄոնթեՎիտէօ, Ուրուկուէյի Նուայարեան-Մանուկեան Վարժարանէն ներս, ուր տեղի ունեցաւ բացումը ընդարձակուած համալիրին, որ կը պարունակէ երկու մանկապարտէզի սենեակներ, հինգ դասարաններ եւ Էւէ Միմոնեան անուան Սրահը:

Յունիս 2005—Գանուկա Փարֆ, Գալիֆորնիա գտնուող Մանուկեան-Տեմիրեան Վարժարանէն ներս տեղի ունեցաւ յատուկ արարողութիւն, որով բացումը կատարուեցաւ նոր յարմարութիւններ հանդիսացող վեց դասարաններուն եւ ուսուցչաց գրասարանի մը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., Ամենայն Հայոց Կաթողիկոսը, օրհնեց եւ նուիրագործեց այն յարմարութիւնները: Թէեւ Էական հանգանակութիւնը, վարժարանին Մնողաց-Ուսուցչաց Կազմակերպութեան գոյացուցած \$300,000ի գումարը ներառեալ, ինչպէս նաեւ ընդարձակման շինարարութիւնը 2003 թուականին սկսան, յաւելեալ \$100,000ի գումար մը խոստացուեցաւ դասարաններէն չորսին համար:

Սեպտ. 2005—Իրր չարքըր դպրոց՝ Մեծագոյն Տիբորյի համայնքին ծառայելու նպատակով, Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանը հիմնովին նորոգեց իր նախակրթարանի եւ երկրորդական վարժարանի շէնքերը: Անկէ գաւ, 2004 թուականին, Ուոլթըն ընտանիքի Հիմնադրամէն \$153,000ի պարգեւ մը ստացաւ վարժարանս ակադեմիական գերազանցութեան համար: այն գումարը գիտական եւ համակարգչային հետազոտարաններու բարելաման յատկացուեցաւ:

Տարեդարձներ

Սեպտ. 2004—Շարաքավեջ մը, որու ընթացքին ՀԲԸՄի ամէնէն խոշոր դպրոցին հինգ տասնեակ տարիներու իրագործումները զանազան ձեռնարկներու միջոցաւ նշուեցան, Լագար-Նանարեան-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարանը (Հալէպ, Սուրիա) տօնակատարեց իր 50-ամեակը մօտաւորապէս 4,000 մասնակիցներով:

Հոկտ. 2004—Յատուկ նաշկերոյթով մը, որուն 400 սաներ-սանուհիներ, ուսուցչական կազմի անդամներ եւ ծնողներ իրենց մասնակցութիւնը բերին, Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանը (Տիբորյ, Միչիլըն) տօնեց իր 35 ամեակը:

Մայիս-Յունիս 2005—Թրոնթօ, Գանատայի Մասնաճիւղն ու տեղական Դանիէլ եւ Ալիս Զարուկեան վարժարանը միասնաբար կազմակերպեցին մի քանի ձեռնարկներ վարժարանին 20 ամեակը եւ ՀԲԸՄ 99րդ տարեդարձը տօնելու համար: Ալեք Մանուկեան մշակութային Կեդրոնին մէջ տեղի ունեցած գագաթնակէտը հանդիսացող նաշկերոյթին ներկայ էին 250է անլի անդամներ եւ բարեկամներ:

Յունիս 2005—Մոնթրէալ, Գանատայի Արմէն Գէպեք-Ալեք Մանուկեան Վարժարանի 35 տարուայ գոյութիւնը իր երեմուկէտ տասնեակ տարիներուն ուսուցման գերազանցութեան վկայն է: Բարեխառնիկ այս 35 ամեակը պատուրեցաւ նաշկերոյթով, որուն ներկայ գտնուեցան հարիւրաւոր հիւրեր:

Սաները կը Հատուցանեն

Մայիս 2004—300էն անլի ազգայիններ ներկայ գտնուեցան դրամահաւաքի նաշկերոյթի մը, որ կազմակերպուած էր Հալէպի Լագար-Նանարեան-Գալուստ Կիւլպէնկեան Վարժարանի սան-սանուհիներու կողմէն: Հատարիմ մնալով այն առաջնութեան, զոր հետապնդած է վերջին 15 տարիներու ընթացքին, այն է՝ ուսումնաբոշակներ եւ այլ պարգեւներ հալլապիսի գրքէ ամէն տարի, այս խումբը այս ձեռնարկով \$30,000 հանգանակեց:

Նորաշէն ՀԲԸՄի Կեդրոնը, Հալէպ, Սուրիա: Շէնքը կը պարփակէ նաեւ Միմոնէլ Եսայեան մանկապարտէզը, որուն աշակերտները կը տեսնուին հոս:



Ուսանողներ Լուսարձակին Տակ 2004/2005

Պուէնուս Ալբերտի Մարի Մանուկեան երկրորդական վարժարանի, ինչպէս նաեւ Գանուկա Փարֆ, Գալիֆորնիայի Մանուկեան-Տեմիրեան Վարժարանի ուսանողներ փոխն ի փոխ այցելեցին Գալիֆորնիա եւ Արժանքին:

Չոյգ այս այցելութիւնները մաս կը կազմէին փոխանակման այն ծրագրին, որ ստեղծուեցաւ յառաջ տանելու ՀԲԸՄի առաջնութիւններէն մէկը՝ երիտասարդութիւնը գիտակից դարձնել այն հասարակաց արժէքներուն, որոնք հայեր կը կայան իրարու:

Երկու տարի յաջորդաբար, Մանուկեան-Տեմիրեան Վարժարանէն ընդամենը 80 ուսանողներ գոլէն մակարդակի «Էտվէնստ Փլէյսմընդ» Ծրագրին քննութեան վրայ բարձր նիշեր ստացան՝ Գոլէն Պորտէն Սֆալըրի (դպրագէտ) աստիճանի արժանանալով:

